ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 09/2022-2023

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՆԱԶԵԼԻ ՀՐԱՉՅԱՅԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 5 ապրիլի, 2023 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Ն. Համբարձումյանի, Մ. Գալստյանի, Լ. Ալեքսանյանի, (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Նազելի Հրաչյայի Բաղդասարյանի կողմից իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ 2022 թվականի դեկտեմբերի 9-ին հարուցված թիվ 09/2022 վարույթի նյութերը

պարզեց.

I. Նախապատմություն

1. 2022 թվականի դեկտեմբերի 5-ի Ալինա Արտաշեսի Գեղամյանը Հանձնաժողովին հասցեագրել է «Շիրակի մարզպետի կողմից բարեվարքության խախտման և շահերի բախման մասին» վերտառությամբ դիմումը:
2. Դիմումի մեջ ներկայացրել է տեղեկություն այն մասին, որ.

1) ՀՀ Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 1 դպրոց» ՊՈԱԿ-ում տնօրենի թափուր տեղի համար 24.10.2022 թ.-ին հայտարարված մրցույթին մրցակցել են երկու թեկնածուներ, որոնցից մեկը Ալինա Գեղամյանն է, մյուսը Հայկ Ռուշանյանը:

2) Կառավարման խորհրդի կազմում եղել է մարզպետի եղբայրը՝ Արման Բաղդասարյանը, ում նշանակել է մարզպետը:

3) Միևնույն փաստական հանգամանքներում Շիրակի մարզպետարանը Էմմա Հարությունյանին հեռացրել է կառավարման խորհրդից, իսկ Արման Բաղդասարյանին՝ ոչ:

4) Ալինա Գեղամյանը իր դիմումով վկայակոչել է «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ շահերի բախմանը վերաբերող օրենսդրական կարգավորումները, ըստ այդմ՝ գտել է, որ իր դիմումը հիմք է «Հանձնաժողովի կողմից վարույթ հարուցելու համար:

3. 2022 թվականի դեկտեմբերի 9-ին կայացվել է թիվ 09/2022 որոշումը՝ ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Հրաչյայի Բաղդասարյանի կողմից իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:
4. 2022 թվականի դեկտեմբերի 13-ին վարույթ հարուցելու մասին որոշման օրինակները ուղարկվել են դիմումատու Ալինա Գեղամյանին և Նազելի Բաղդասարյանին, վերջինիս միաժամանակ առաջարկվել է ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ, ինչպես նաև փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր, որին ի պատասխան 2023 թվականի փետրվարի 2-ին Նազելի Բաղդասարյանը ներկայացրել է պարզաբանում:
5. 2023 թվականի փետրվարի 7-ին հարցում է կատարվել ՀՀ արդարադատության քաղաքացիական ակտերի գրանցման գործակալություն (այսուհետ՝ ՔԿԱԳ)՝ Նազելի Բաղդասարյանի եղբոր վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, որին ի պատասխան՝ 2023 թվականի փետրվարի 7-ին տրամադրվել է հարցման պատասխանը:
6. 2023 թվականի փետրվարի 9-ին հարցում է կատարվել ՀՀ Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 1 դպրոց» (այսուհետ՝ նաև Դպրոց) ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդին (այսուհետ՝ նաև Խորհուրդ) և Դպրոցի տնօրենին Խորհրդի նիստերի

արձանագրությունների պատճենները ստանալու նպատակով, որին ի պատասխան 2023 թվականի փետրվարի 13-ին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը:

7. 2023 թվականի փետրվարի 9-ին հարցում է կատարվել ՀՀ Շիրակի մարզպետին՝ 2022 թվականի ապրիլի 26-ին ՀՀ Շիրակի մարզպետի (այսուհետ նաև Մարզպետ) ընդունած N 215-Ա որոշումը, այդ որոշման ընդունման հիմք հանդիսացած փաստաթղթերը, Ալինա Գեղամյանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 14-ի դիմումի պատասխանը, դիմումով բարձրացված հարցերի վերաբերյալ կատարած գործողությունները և 2022 թվականի սեպտեմբերի 16-ին ընդունված Մարզպետի 484-Ա որոշումը, այդ որոշման ընդունման հիմք հանդիսացած փաստաթղթերը ստանալու նպատակով, որին ի պատասխան 2022 թվականի փետրվարի 14-ին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը:
8. 2023 թվականի փետրվարի 9-ին Հանձնաժողովը դիմել է դիմումատու Ալինա Գեղամյանին՝ իր կողմից վկայակոչված փաստարկների հիմնավորվածությունը հավաստող լրացուցիչ նյութեր ստանալու նպատակով, որին ի պատասխան 2022 թվականի փետրվարի 17-ին ներկայացվել են իրավասու մարմիններին հասցեագրված դիմումներ և ստացված պատասխաններ:
9. 2023 թվականի մարտի 7-ին ընդունվել է վարույթի ժամկետը երկարացնելու մասին N 09-01/2022-2023 որոշումը, որով վարույթի ժամկետը երկարացվել է 30 օր ժամկետով՝ մինչև 2023 թվականի ապրիլի 6-ը: Վարույթի ժամկետի երկարաձգման հիմքով պայմանավորված՝ 2023 թվականի մարտի 10-ին Հանձնաժողովը դիմել է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նաև Նախարարություն) խնդրելով ներկայացնել պաշտոնական պարզաբանում՝ «պետական հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի անդամը «Հանրակրթության մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքներով գործառութային իմաստով համարվում է պաշտոն, թե՝ ոչ»՝ միաժամանակ լիազոր մարմնին է ներկայացրել պարզաբանման իր տարբերակն առ այն, որ պետական հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի անդամը հանդիսանում է պաշտոն:
10. 2023 թվականի մարտի 17-ին Նախարարությունը գրությամբ պատասխանել է: Միաժամանակ, Հանձնաժողովը 2023 թվականի ապրիլի 4-ին Նախարարությանը

տեղեկացրել է, որ պատասխան գրությամբ ներկայացված տեղեկատվությունը չի հանդիսանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 42-րդ հոդվածի իմաստով պաշտոնական պարզաբանում:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ.

Նազելի Բաղդասարյանը 2023 թվականի փետրվարի 2-ին, հարուցված վարույթի շրջանակներում, ներկայացրել է պարզաբանումներ (այսուհետ՝ Պարզաբանում), որով մասնավորապես հայտնել է, որ՝

11. Իր գործողությունը իր հետ փոխկապակցված անձի մասնավոր շահերով առաջնորդվել չի կարող համարվել, քանի որ տվյալ գործողությունը (անգործությունը) կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն, անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա (խորհրդի բոլոր անդամների):
12. Պետական ուսումնական հաստատության խորհրդին անդամությունը չի կարող դիտվել որպես պաշտոն, քանի որ խորհդի անդամ լինելը որպես պաշտոն նախատեսված չէ ո՛չ «Հանրակրթության մասին» օրենքով, ո՛չ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պաշտոնների դասակարգման մեջ, իսկ խորհրդի անդամի՝ որոշակի լիազորություններով օժտված լինելու հանգամանքը միայն չի կարող խոսել պաշտոն համարելու մասին:
13. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված ՀՀ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգով և ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության» պետական հանրակրթության ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությամբ մարզպետի կողմից ներկայացուցիչներ առաջադրելու որևէ սահմանափակում նախատեսված չէ:
14. Նազելի Բաղդասարյանը նաև հայտնել է, որ իր գործունեությամբ Խորհրդի որևէ անդամի, այդ թվում՝ Արման Բաղդասարյանի գույքային կամ իրավական դրությունը բարելավող արտոնություններ չեն նախատեսվել:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

15. Նազելի Հրաչյայի Բաղդասարյանը ՀՀ Շիրակի մարզպետի պաշտոնը ստանձնել է 2021 թվականի նոյեմբերի 8-ին, ազատվել՝ 2023 թվականի հունվարի 27-ին:
16. Արման Բաղդասարյանը հանդիսանում է Նազելի Բաղդասարյանի եղբայրը:
17. 2022 թվականի ապրիլի 26-ի «ՀՀ Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 1 հիմական դպրոց» ՊՈԱԿ-ի առանձին խորհրդի անվանական կազմը հաստատելու, ՀՀ Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 19-ի N 78-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 215-Ա որոշմամբ՝ ի թիվս այլոց, Նազելի Բաղդասարյանը Աղասի Մաթևոսյանին՝ առաջադրված Նախարարության կողմից, Արման Բաղդասարյանին և Զավեն Մանուկյանին՝ առաջադրված Մարզպետի՝ այսինքն իր կողմից, Էմմա Հարությունյանին՝ առաջադրված Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից, հաստատել է Խորհրդի կազմում:
18. Արման Բաղդասարյանին՝ որպես Խորհրդի անդամ առաջադրելու փաստը հաստատվել է վարույթի նյութերում առկա Մարզպետի թիվ 215-Ա որոշմամբ, ինչպես նաև Մարզպետի 01//01277-2023 գրությամբ տրամադրված տեղեկատվությամբ:
19. 2022 թվականի հունիսի 15-ի դրությամբ Աղասի Մաթևոսյանը Խորհրդի նիստերից բացակայել է 3 անգամ:
20. 2022 թվականի հուլիսի 7-ի դրությամբ Արման Բաղդասարյանը Խորհրդի նիստերից բացակայել է 3 անգամ:
21. 2022 թվականի սեպտեմբերի 13-ի դրությամբ Էմմա Հարությունյանը Խորհրդի նիստերից բացակայել է 3 անգամ:
22. 2022 թվականի սեպտեմբերի 14-ին Ալինա Գեղամյանը դիմում է ներկայացրել Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանին, որով հայտնել է, որ վերջինիս կողմից առաջադրված անդամ Արման Բաղդասարյանը 2022 թվականի ընթացքում կառավարման խորհրդի նիստերից առնվազն երեք անգամ բացակայել է:
23. Համաձայն 2022 թվականի սեպտեմբերի 14-ին տեղի ունեցած Դպրոցի մանկավարժական խորհրդի նիստի N 3 արձանագրության՝ մանկավարժական խորհուրդը նույն օրը կայացած նիստում որոշում է ընդունել Էմմա Հարությունյանի

փոխարեն Խորհրդի անդամի թեկնածու առաջադրել Էլյա Սերոբյանին, քանի որ Էմմա Հարությունյանը Խորհրդի նիստերից 3 անգամ բացակայել է:

24. 2022 թվականի սեպտեմբերի 16-ին ընդունված Մարզպետի 484-Ա որոշմամբ Նազելի Բաղդասարյանը դադարեցրել է մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Էմմա Հարությունյանի լիազորությունները և նրա փոխարեն մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Էլյա Սերոբյանին հաստատել է Խորհրդի կազմում:

25. 2022 թվականի սեպտեմբերի 16-ի դրությամբ՝ Զավեն Մանուկյանը Խորհրդի նիստերից բացակայել է 3 անգամ:

26. 2022 թվականի սեպտեմբերի 23-ին Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղարը պատասխանել է Ալինա Գեղամյանի կողմից՝ 2022 թվականի սեպտեմբերի 14-ին Մարզպետին ուղղված դիմումին՝ հայտնելով, որ Շիրակի մարզպետարանը Խորհրդից պահանջել է ներկայացնել հիմքեր Խորհրդի անդամ Արման Բաղդասարյանի կողմից Խորհրդի նիստերին չներկայանալու վերաբերյալ, միևնույն ժամանակ Ալինա Գեղամյանին տեղեկացրել է, որ Դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի պայմաններում հնարավոր չէ խնդրի հետագա կարգավորմանն ուղղված քայլեր ձեռնարկել՝ հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը:

27. 2022 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Արման Բաղդասարյանը Խորհրդի նիստերից բացակայել է 4 անգամ:

28. 2022 թվականի նոյեմբերի 4-ի N 12 արձանագրության՝ տնօրեն է ընտրվել Հայկ Ռուշանյանը:

29. 2022 թվականի դեկտեմբերի 9-ին Նազելի Բաղդասարյանը ընդունել է 666-Ա որոշումը, որով դադարեցրել է իր (Մարզպետի) կողմից առաջադրված Խորհրդի անդամներ Արման Բաղդասարյանի և Զավեն Մանուկյանի լիազորությունները: Նույն որոշմամբ Խորհրդի կազմում կրկին հաստատել է իր կողմից առաջադրված Արման Բաղդասարյանին և Վանիկ Մարտիրոսյանին:

IV. Շահերի բախման վերաբերյալ միջազգային չափորոշիչների և սահմանումների շրջանակը

30. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից սահմանված «Հանրային ծառայողների վարքագծի կանոնագրքի» (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք)

համաձայն՝ (R(2000)10 Հանձնարարական, ընդունված 106-րդ նստաշրջանի ընթացքում 2000 թվականի մայիսի 11-ին, Հոդված 13) շահերի բախումն առաջանում է բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի մոտ առկա է անձնական այնպիսի շահ, որը կարող է ազդել կամ թվում է, թե կարող է ազդել պաշտոնատար անձի պաշտոնեական լիազորությունների անաչառ և օբյեկտիվ իրականացման վրա: Այս պարագայում անձնական շահը ենթադրում է առավելությունների կամ արտոնությունների ձևավորում իր անձի կամ իր ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների, ընկերների, անձանց կամ կազմակերպությունների համար, որոնց հետ պաշտոնատար անձն առնչություն ունի:

31. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հանրային ծառայությունում շահերի բախման իրավիճակների կառավարման մասին ուղեցույցում շահերի բախումը բնութագրում է հետևյալ կերպ՝ շահերի բախումն ընդգրկում է հանրային ծառայողի մոտ հանրային պարտականությունների և մասնավոր շահերի կոնֆլիկտը, որտեղ հանրային ծառայողն ունի մասնավոր շահ, որը կարող է անտեղի ազդեցություն ունենալ հանրային ծառայողի պաշտոնեական պարտականությունների իրագործման վրա: Եթե շահերի բախման իրավիճակները պատշաճորեն չնույնականացվեն և կառավարվեն, ապա դրանք կարող են լրջորեն վտանգել կազմակերպությունների բարեվարքությունը և հանգեցնել կոռուպցիայի ինչպես հանրային ոլորտում, այնպես էլ մասնավոր:

32. Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի «Շահերի բախումը տեղական և տարածքային մակարդակներում» հուշագրում սահմանվում են շահերի բախման քաղաքականության նպատակները և խնդիրները՝ նշելով, որ ընդհանուր առմամբ, շահերի բախման քաղաքականությունները չպետք է միայն լինեն շահերի բախման կանխարգելման գործիք: Դրանք պետք է նաև՝

- մեծացնեն վստահությունը կառավարության նկատմամբ,
- ցուցադրեն ընտրված ներկայացուցիչների և պաշտոնատար անձանց բարեվարքության բարձր մակարդակը,

- կանխարգելեն շահերի բախման ի հայտ գալը, քանի որ պաշտոնական գործողությունները ենթակա կլինեն հանրային հսկողության,
- պետական պաշտոնավարումից հետ պահեն այնպիսի անձանց, որոնց անձնական ֆինանսական միջոցները ենթակա չեն հանրային հսկողության,
- հանրությանն ավելի մեծ հնարավորություն ընձեռեն պետական պաշտոնատար անձանց կատարողականի մասին դատելու՝ վերջինների արտաքին ֆինանսական շահերի լույսի ներքո:

Ոչ միայն Եվրոպայի Խորհրդի կողմից սահմանված Վարքագծի կանոնագիրքը, այլ նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) շահերի բախման հասկացության մեջ ընդգրկում են նաև հավանական և թվացյալ շահերի բախումը: Ըստ ՏՀԶԿ-ի մեկնաբանության՝ հավանական և թվացյալ շահերի բախումը ևս վտանգում է պաշտոնեական որոշումների անաչառության նկատմամբ հանրային վստահությունը: Պաշտոնատար անձինք որոշումների կայացման ժամանակ պետք է հաշվի առնեն նաև հանրային ընկալումները: ՏՀԶԿ-ն առաջարկում է, որ հավանական և թվացյալ շահերի բախման դեպքերը ևս պետք է բացառվեն, որպեսզի նվազեցվեն պաշտոնատար անձի համբավի առնչությամբ այն ռիսկերը, որոնք կարող են վնասել անձի/համակարգի բարեվարքությանը (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Հանրային ծառայությունում շահերի բախման կառավարում, գործիքակազմ 1):

ՏՀԶԿ-ն շահերի բախումը սահմանում է որպես հակասություն պաշտոնատար անձի մասնավոր շահի և պաշտոնեական պարտականությունների միջև, որի պարագայում անձի մասնավոր շահը կարող է ոչ պատշաճ կերպով ազդել պաշտոնեական պարտականությունների իրականացման վրա (ՏՀԶԿ Գործիքակազմ հանրային պետական ոլորտում շահերի բախման կառավարման վերաբերյալ, տե՛ս էջ 13):

V. Շահերի բախման վերաբերյալ ներպետական օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր

33. «Հանրային ծառայության մասին» օրենքի (մինչև ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի

դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ, այսուհետ՝ նաև Օրենք) 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:

34. Օրենքի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը, որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև իր կամ իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը:

35. Միևնույն ժամանակ Օրենքի նույն հոդվածի 8-րդ մասը կարգավորում է փոխկապակցված անձանց շրջանակը՝ սահմանելով, որ սույն օրենքի իմաստով փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի (...) եղբայրը:

36. Ըստ էության, Օրենքը անձնական շահերով առաջնորդվելու հանգամանքի առկայության կամ բացակայության համար հիմնվում է դրան տրված ողջամիտ մեկնաբանության վրա: Ի թիվս այլ դրսևորումների, Օրենքն անձնական շահերով առանջնորդվել է դիտարկում նաև այն դեպքերը, երբ անձն իր լիազորությունների շրջանակներում կատարում է գործողություն կամ կայացնում է որոշում, որը թեև օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է նաև (...) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը: Նման դեպքերի առկայության պարագայում Օրենքի նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունի) ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին և մինչև վերադասի համաձայնություն ստանալը ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց: Նման կարգավորումներով Օրենքն ապահովում է, որ «անձնական շահերով առաջնորդվելու» վարկածը ստանա ողջամիտ մեկնաբանություն և ունենա այն չեզոքացնելու հնարավորություն՝ զերծ

պահելով նաև անձին նման իրավիճակներում որոշում կայացնելու, գործողություն իրականացնելու համար պատասխանատվությունից:

37. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև կոլեգիալ կառավարման, խորհրդակցական, վերահսկողություն իրականացնող և (կամ) այլ մարմինների (խորհուրդ, տնօրենների խորհուրդ և այլն) ձևավորում:

38. 21-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորմամբ պետական կազմակերպության լիազորված պետական մարմնի ղեկավարը, պետական կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները, պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինների անդամները պետական կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող պետական կազմակերպության:

39. «Հանրակրթության մասին» օրենքի (մինչև ««Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թ. փետրվարի 9-ի ՀՕ-35-Ն օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված՝ 10-12-րդ հոդվածների փոփոխություն սահմանող դրույթի ուժի մեջ մտնելը (ուժի մեջ է մտել 01.01.2023 թվականին) գործող խմբագրությամբ) 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պետական ուսումնական հաստատությունն ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ:

40. Նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է խորհրդի լիազորությունները, որի համաձայն՝ 1) պետական ուսումնական հաստատության խորհուրդը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ընտրում է տնօրեն, 2) հաստատում է ուսումնական հաստատության կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, 3) հավանություն է տալիս ուսումնական հաստատության զարգացման ծրագրին, 4) քննարկում և հավանություն է տալիս ուսումնական հաստատության հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին, 5) կարող է սահմանել պակաս խտությամբ դասարան՝ ուսումնական հաստատության լրացուցիչ միջոցների հաշվին, 6) տնօրենի ներկայացմամբ քննարկում է ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, տալիս է հավանություն և ներկայացնում պետական լիազորված մարմնի հաստատմանը, 7) քննարկում է

ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները, 8) որոշում է մասնակցել արտաքին գնահատման, քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները, 9) վերահսկում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարումը, 10) հիմնադրի սահմանած կարգով սահմանում է ուսումնական հաստատության շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները, 11) առաջարկություններ է ներկայացնում պետական լիազորված մարմին՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան, 12) հաստատում է իր աշխատակարգը և հաստատության կանոնադրությամբ ու խորհրդի ընտրության կարգի համաձայն՝ ընտրում է խորհրդի նախագահ, 13) իրականացնում է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված և (կամ) հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

41. Նույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը կարգավորում է պետական ուսումնական հաստատության խորհրդի անդամի պարտականությունների շրջանակը՝ մասնավորապես սահմանելով, որ խորհրդի անդամը պարտավոր է՝ 1) ուսումնական հասատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել խորհրդի նիստերին, գործել բարեխղճորեն՝ ի նպաստ երեխայի շահերի և կրթության արդյունավետության. 2) պատշաճորեն կատարել սույն օրենքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված և խորհրդի որոշումներով (հանձնարարականներով) իրեն վերապահված պարտականությունները. 3) կատարել խորհրդի, իրեն ներկայացրած՝ լիազոր մարմնի այն հանձնարարությունները, որոշումները, որոնք բխում են ուսումնական հաստատության կանոնադրական նպատակներից:

42. Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ պետական ուսումնական հաստատության խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են՝ մեկ տարվա ընթացքում խորհրդի առնվազն երեք նիստի չներկայանալու դեպքում: Սույն օրենքը վկայակոչված հիմքով լիազորությունների դադարեցման համար սահմանում է նաև բացառություն. նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Խորհրդի անդամի լիազորությունները սույն հոդվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերով սահմանված հիմքերով չեն կարող դադարեցվել տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի օրվանից մինչև տվյալ մրցույթի ավարտը, (...):

43. ՀՀ Կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 954-ն որոշման N 3 հավելվածի (այսուհետ՝ նաև Օրինակելի կանոնադրություն) 42-րդ կետը սահմանել է հանրակրթական դպրոցի կառավարման մարմինների շրջանակը: Դրանք են՝ 1) հիմնադիրը. 2) նախարարությունը. 3) տարածքային կառավարման մարմինը և Երևանի քաղաքապետը. 4) խորհուրդը. 5) հանրակրթական դպրոցի տնօրենը:

44. Օրինակելի կանոնադրության 48-րդ կետի 2-րդ սահմանում է՝ Հանրակրթական դպրոցի գործունեության վերահսկողությունն մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում իրականացնում է մարզպետը:

45. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի «Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի N 981-ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 113-Ն հրամանով հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ հավելվածի (այսուհետ նաև՝ Կարգ)՝ 2-րդ կետի համաձայն՝ Պետական ուսումնական հաստատության հիմնվելու դեպքում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, մարզպետարանը և Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ լիազորված մարմին) հաստատության հիմնադրման կամ խորհրդի ձևավորման կարգի փոփոխման դեպքերում 30-օրյա ժամկետում, սույն կարգի համաձայն, ըստ ենթակայության՝ կազմակերպում և ապահովում են հաստատություն կոլեգիալ կառավարման մարմնի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամների ընտրության գործընթացը:

46. Կարգը կարգավորում է նաև, թե որ սուբյեկտները և նրանցից յուրաքանչյուրը քանի խորհրդի անդամ առաջադրելու լիազորություն ունի մասնավորապես 6-րդ կետի համաձայն՝ խորհրդի անդամներին, առաջադրում են՝ 1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը (այսուհետ՝ նախարար), 2) լիազորված մարմինը, 3) մանկավարժական խորհուրդը (...), 4) ծնողական խորհուրդը (...), 5) համայնքի ղեկավարը, իսկ Կարգի 9-րդ կետի 1-

ին ենթակետի համաձայն՝ մարզային ենթակայության հաստատությունների առանձին խորհուրդներում մարզպետն առաջադրում է խորհրդի 4 անդամ, որից մեկին գրավոր ձևով մարզպետին է ներկայացնում տվյալ համայնքի ղեկավարը:

47. Կարգի 19-րդ կետի համաձայն՝ լիազորված մարմինը, հիմք ընդունելով առաջադրող մարմնի կողմից առաջադրված խորհրդի անդամի թեկնածուի տվյալները, սույն կարգի 17-րդ կետի պահանջներին համապատասխան, 3 աշխատանքային օրվա ընթացքում, ըստ ենթակայության՝ հաստատում է խորհրդի անվանական կազմը կամ սույն կարգի 11-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ կետերի պահանջների խախտման առկայության դեպքում՝ մերժում է խորհրդի անվանական կազմում առաջարկված տվյալ անձի թեկնածությունը:

VI. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը.

Հանձնաժողովը, իրականացնելով վարույթում առկա փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծություն, արձանագրում է հետևյալը.

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:

Նշված դրույթից հետևում է, որ շահերի բախումն իրավիճակ է, երբ ***պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս*** *կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ* **փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել***: Նույն հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորումներից հետևում է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով փոխկապակցված անձ է հանդիսանում նաև պաշտոն զբաղեցնող անձի եղբայրը:*

Օրենսդիրը նաև սահմանել է, որ պաշտոն զբաղեցնող անձի՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի ***անձնական շահերով առաջնորդվելը*** նշանակում է անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը, որը ***թեև ինքնին օրինական է,*** սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ

ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև իր հետ փոխկապակցված անձի պաշտոնում նշանակմանը (Օրենքի 2-րդ մասի 4-րդ կետ):

Սույն վարույթում քննարվող իրավիճակում պաշտոնատար անձը՝ ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանը, ընդունել է 2022 թվականի ապրիլի 26-ի «ՀՀ Շիրակի մարզի «Ախուրյանի թիվ 1 հիմական դպրոց» ՊՈԱԿ-ի առանձին խորհրդի անվանական կազմը հաստատելու, ՀՀ Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 19-ի N 78-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 215-Ա որոշումը: Վերջինս վերոնշյալ որոշմամբ իրացրել է իր լիազորությունները՝ եղբորը **առաջադրելով** «Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամ, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել, որը տվյալ դեպքում հանգեցրել է իր հետ փոխկապակցված անձի՝ եղբորը՝ Արման Բաղդասարյանին, ***պաշտոնի նշանակմանը*** (Օրենքի 2-րդ մասի 4-րդ կետ)***:***

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» և «Հանրակրթության մասին» օրենքներով սահմանված իրավակարգավորումներից հետևում է, որ պետական հանրակրթական ուսումնական հաստատության ***կառավարումն իրականացնում են գործադիր և կոլեգիալ կառավարման մարմինները:*** Այսպես, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված են հանրակրթական ուսումնական հաստատության ***կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի լիազորությունները***, որոնց շրջանակում ներառված են ուսումնական հաստատության տնօրենի ընտրությունը, հաստատության կազմակերպական կառուցվածքի, ներքին կարգապահական կանոնների հաստատումը, հաստատության զարգացման ծրագրին, հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին հավանություն տալը, զարգացման ծրագրի կատարման վերահսկումը, ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշվին, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտին հավանություն է տալը, ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունների քննարկումը, ինչպես նաև օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված և (կամ) հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունների իրականացումը: Նշված լիազորությունների միջոցով խորհրդի անդամն իրագործում է ուսումնական ***հաստատության կառավարումն ապահովող***

իր գործառույթները: Նույն հոդվածով սահմանված են նաև պետական ուսումնական հաստատության ***խորհրդի անդամի պարտականությունների շրջանակը***, որոնք պետք է դրսևորվեն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով խորհրդի նիստերին մասնակցությամբ, ի նպաստ երեխայի շահերի և կրթության արդյունավետության բարեխիղճ գործելով, օրենքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված և խորհրդի որոշումներով (հանձնարարականներով) իրեն վերապահված պարտականությունների պատշաճորեն կատարմամբ, խորհրդի, իրեն ներկայացրած լիազոր մարմնի այն հանձնարարությունների, որոշումների կատարմամբ, որոնք բխում են ուսումնական հաստատության կանոնադրական նպատակներից:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ խորհրդի անդամը, ընդգրկված լինելով հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնում, կոլեգիալության հիմունքներով (կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելով) իրականացնում է ***կառավարման մարմնին օրենքով վերապահված լիազորություններ,*** ինչպես նաև կրում է խորհրդի անդամի կարգավիճակից բխող ***պարտականություններ:***

Հետևաբար, խորհրդի անդամը, որպես իրավահարաբերության սուբյեկտ, իր ***կարգավիճակին բնորոշ կառավարչական գործառույթներով պայմանավորված՝*** ունի իրավասությունների և պարտականությունների ծավալ, ինչը բնորոշ է ***«պաշտոն» եզրույթի բովանդակությանը:***

Հանձնաժողովը 2023 թվականի մարտի 10-ին դիմել է Նախարարությանը՝ խնդրելով պաշտոնապես պարզաբանել՝ «պետական հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի անդամը «Հանրակրթության մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքներով գործառութային իմաստով համարվում է պաշտոն, թե՝ ոչ»: Միաժամանակ Հանձնաժողովը լիազոր մարմնին է ներկայացրել քննարկվող նորմի պարզաբանման իր տարբերակը, որով մասնավորապես, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցի կառավարման խորհրդին օրենքներով վերապահված են բացառիկ լիազորություններ, որոնք իրենց գործառնական էությամբ հանդիսանում են կառավարչական բնույթի գործառույթներ՝ հետևաբար խորհրդի անդամը պետք է համարել պաշտոն:

2023 թվականի մարտի 17-ին Նախարարության կողմից ստացվել է պատասխան, որով հայտնել է, որ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի համաձայն՝ պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր և կոլեգիալ կառավարման մարմինները: Նախարարությունը նշել է նաև, որ «Հանրակրթության մասին» օրենքը սահմանել է, որ պետական ուսումնական հաստատությունն ունի *կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ*, իսկ ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը:

Նախարարությունն իր պատասխան գրությամբ առանցքային է համարել և մատնանշել է այն, որ ***ուսումնական հաստատության խորհուրդը կառավարման մարմին* է**, որն ունի *հաստատության կառավարմանն ուղղված օրենքով սահմանված լիազորություններ:*

«Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով սպառիչ կերպով սահմանված են Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման հիմքերը:

Նշված իրավակարգավորման համաձայն՝ Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման ինքնուրույն հիմք է հանդիսանում մեկ տարվա ընթացքում խորհրդի առնվազն երեք նիստի չներկայանալը:

Օրենսդիրը լիազորությունների դադարեցումը պայմանավորել է այնպիսի իրավաբանական փաստի առաջ գալու հանգամանքով, ինչպիսին է խորհրդի անդամի՝ խորհրդի առնվազն երեք նիստի չներկայանալը: Նշվածից բացառություն է սահմանված միայն այն դեպքի համար, երբ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված է մրցույթ:

2022 թվականի սեպտեմբերի 14-16-ին, Խորհրդի երկու անդամների վերաբերյալ (Արման Բաղդասարյանի և Էմմա Հարությունյանի) առկա է եղել տեղեկատվություն երկու տարբեր սուբյեկտներից՝ Ալինա Գեղամյանից և Դպրոցի մանկավարժական խորհրդից, վերոնշյալ անդամների՝ Խորհրդի նիստերից առնվազն 3 բացակայության վերաբերյալ:

2022 թվականի սեպտեմբերի 14-ին դիմումատու Ալինա Գեղամյանի կողմից՝ Մարզպետին ներկայացրած դիմումին պատասխանել է ՀՀ Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա.Աբրահամյանը՝ 2022 թվականի սեպտեմբերի 23-ին, որով

Ա.Աբրահամյանը նշել է, որ Շիրակի մարզպետարանը Խորհրդից պահանջել է ներկայացնել հիմքեր Խորհրդի անդամ Արման Բաղդասարյանի կողմից Խորհրդի նիստերին չներկայանալու վերաբերյալ:

Սույն գործում առկա փաստերից հետևում է, որ Նազելի Բաղդասարյանը 2022 թվականի սեպտեմբերի 16-ին դադարեցրել է միայն Էմմա Հարությունյանի լիազորությունները՝ հիմք ընդունելով Էմմա Հարությունյանի կողմից խորհրդի նիստերից առնվազն 3 բացակայությունը: Մինչդեռ, Արման Բաղդասարյանի լիազորությունները դադարեցրել է 2022 թվականի դեկտեմբերի 9-ին՝ Դպրոցի տնօրեն ընտրելուց հետո: Այնուհետև, նույն որոշմամբ Նազելի Բաղդասարյանը կրկին առաջադրելով Արման Բաղդասարյանին, հաստատել է վերջինիս որպես անդամ նույն Խորհրդի կազմում:

Նշված փաստերը գնահատելիս Հանձնաժողովը գտնում է, որ նույն փաստական հանգամանքների առկայության դեպքում մարզպետի կողմից դրսևորված տարբերակված մոտեցումը, իր կողմից նույն անձին լիազորությունների դադարեցումից հետո անմիջապես Խորհրդի կազմում առաջադրելն այն դեպքում, երբ այդ անձը հանդիսացել է իր՝ մարզպետի եղբայրը, բավարար հիմքեր են ողջամտորեն մեկնաբանելու, որ մարզպետն, ըստ էության, առաջնորդվել է իր և իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով:

Տվյալ պարագայում Օրենքի 33-րդ հոդվածը կարգավորում է շահերի բախման հետ կապված հարաբերությունները: Այսպես, նշված հոդվածով են սահմանվում շահերի բախման դեպքի հասկացությունը, պաշտոն զբաղեցնող անձի՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելու բովանդակային սահմանները: Մասնավորապես, նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված է. «Պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման հանգեցնող գործողություններից, ձեռնպահ ***մնա շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց***»: Հետևաբար Նազելի Բաղդասարյանը, զբաղեցնելով վարչական պաշտոն, պարտավոր է առաջնորդվել բացառապես «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանվող շահերի բախման իրավակարգավորումներով: Այս առումով, Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ Կարգի (կամ Օրինակելի կանոնադրության) և «Հանրային ծառայության մասին» օրենքի միջև հակասության դեպքում գործում են Օրենքի դրույթները: Նշվածը բխում

է նաև իրավական նորմերի աստիճանակարգության վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջից (Սահմանադրության 5-րդ հոդված): Իսկ ինչ վերաբերում է Նազելի Բաղասարյանի այն հետևություններին, որ ո՛չ «Հանրակրթության մասին» օրենքով, ո՛չ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պաշտոնների դասակարգման մեջ, խորհրդի անդամը չի հանդիսանում պաշտոն, վարույթի մասնակցի նշված դիրքորոշմանն ըստ էության Հանձնաժողովն անդարադարձել է սույն եզրակացության պատճառաբանական մասում՝ «պաշտոն» եզրույթի մեկնաբանությունում:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովը ***եզրահանգում է,*** որ սույն գործով քննարկված փաստական հանգամանքների շրջանակներում Նազենի Բաղդասարյանն իր գործողություններով չի պահպանել է Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

ՀՀ Շիրակ մարզպետ Նազենի Բաղդասարյանի գործողություններում շահերի բախման իրավիճակի առկայության մասին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ